



Նվիրվում t 2ովիաննես Այվազովսկու 200–ամյակին։ Dedicated to the 200th anniversary of Hovhannes Aivazovsky.



275 75 97U 85.14

Ա 653 Աշխարհի հայ Նկարիչները–2.– Եր.: Համահայկական աշխարհագրական ասոցիացիա, 2017.– 128 էջ:

Armenian Artists of the World-2 Yer.: Panarmenian Geographic Association, 2017.– 128 pp.

Երևան © Անտարես 2017. **Աշխարհի հայ նկարիչները-2** գիրքը ներկայացնում է տարբեր երկրներում գործունեություն ծավալած ու ճանաչում գտած հայ նկարիչներին:

Armenian Artists of the World-2

The book represents famous Armenian artists from all over the world.

Նախատեսված չէ վաճառքի համար։ Not for sale.

Բոլոր իրավունքները պաշտպանված են: All rights reserved.

Գրքի վրա աշխատել են՝

Project team

Տաթևիկ Սայադյանը

Tatevik Sayadyan

Սարգիս Կարապետյանը Աննա Բեգլարյանը Էսթեր Խանիկյանը Ասթինե Բալասանյանը Թագուհի Կարապետյանը Ներսես Մարտիրոսյանը Արմեն Մելքումյանը Սուսաննա Գևորգյանը Արմեն Անանյանը

Sargis Karapetyan Anna Beglaryan Ester Khanikyan Astine Balasanyan Taguhi Karapetyan Nerses Martirosyan Armen Melkumyan Susanna Gevorgyan Armen Ananyan Davit Boyajyan

Նախագծի ղեկավար` **Ռաֆայել Հովհաննիսյան** Head of project Rafael Hovhannisyan

ISBN 978-9939-1-0657-1

©«USU 2шјшиши» ФРС, 2017 ©"MTS Armenia" CJSC, 2017

©"Panarmenian Geographic Association", 2017

©«Համահայկական աշխարհագրական ասոցիացիա», 2017



UCHUCZH ZUS LYUCH ZUS ARMENIAN ARTISTS OF THE WORLD

Բովանդակություն **Contents** Ներածական խոսբ 4 Opening Address Նախաբան 6 Preface Հովիաննես Այվազովսկի 8 Hovhannes Aivazovsky Ալեքսանդր Բաժբեուկ–Մելիքյան 24 Alexander Bazhbeuk–Melikyan Վաիրին Բախչանյան 34 Vagrich Bakhchanyan Փաևոս Թերլեմեզյան 40 Panos Terlemezyan ผิกทุกน นิกนเคน 52 Toros Roslin ժակ Իհմալյան 60 Jak Ihmalyan Շիմոն (Սիմոն) Հոլոշի 70 Simon Hollósy Հովևաթանյաններ 80 Hovnatanian family Արման Թադեոս Մանուկյան 90 Arman Tateos Manookian Գրիգոր Շլդյան 106 Gregorio Sciltian Սարգիս Փարաջանյանց 114 Sergei Parajanov





Սիրով ներկայացնում ենք հայ մշակույթի ականավոր գործիչների՝ աշխարհի հայ նկարիչների մասին պատմող շարքի երկրորդ հատորը։ Ուրախ ենք այս նախաձեռնության շրջանակում «Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի» հետ համագործակցությունը շարունակելու համար։

շայկական ծագմամբ պետական գործիչների, զինվորականների, գիտնականների, բարերարների, երաժիշտների հետ միասին՝ աշխարհի հայ նկարիչներն իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել, և այսօր էլ ունեն, իրենց տունը դարձած երկրների վարկը բարձր պահելու գործում։ Նրանք միևնույն ժամանակ երբեք չեն հեռացել սեփական արմատներից՝ հայկական ավանդույթներից. նրանց գործերում, որտեղ էլ որ ապրել կամ ստեղծագործել են, կարելի է զգալ հայկական շունչն ու ոգին։

Այս տարի նշում ենք հռչակավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու 200-ամյակը։ Համաշխարհային ճանաչում ու համբավ վայելող հանճարեղ արվեստագետը մշտապես ապրել է իր հայրենակիցների մասին հոգածությամբ և նվիրումով. Այվազովսկու միջամտությամբ հայ գաղթականներին մեկնած ձեռքը, նրանց կյանքի ու աշխատանքի հարցերը հոգալու նկարչի վճռականությունը մեզ համար շարունակում են մնալ սեփական արմատներին հավատարմության ու անձնվիրության օրինակ։

շույս ունենք՝ այս գիրքը ևս մեկ առիթ կդառնա անդրադառնալու մեր ինքնությանը, ևս մեկ անգամ զգալու մեր հավաքական ուժն ու տաղանդը և գիտակցելու այդ աստվածային պարգևն ի շահ սեփական երկրի զարգացնելու կարևորությունը:



ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրեն



Dear reader,

We gladly introduce to you the second volume of the series about the eminent luminaries of Armenian culture – the Armenian artists of the world. We are equally glad for the continued cooperation with the "Panarmenian Geographic Association" in the frame of this initiative.

The Armenian painters of the world, along with statesmen, military, scientists, philanthropists and musicians of Armenian descent, have invaluably contributed, and continue to do so, in keeping the high revere and raising the image of their host countries. Nevertheless, they have always stayed true to their roots and to the Armenian traditions. No matter how far from their Homeland these painters have lived and created, one cannot help but feel expressions of the distinctive Armenian spirit in their works.

This year we celebrate the 200th anniversary of the prominent marine painter Hovhannes Aivazovsky. The genius artist, who entertained world renown and fame, never seized to prove care and devotion to his compatriots. The supporting hand extended to the Armenian refugees owing to Aivazovsky's interference, the artist's commitment to ease the hardships of their life and work remain to us exemplary in dedication and in devotedness to one's own roots.

We hope this book will be yet another reason to reflect on our identity, another reason to feel our unique collective strength and talent, and to reiterate the importance of nurturing that divine gift for the sake of our nation.

Ralph Yirikian

VivaCell-MTS General Manager

Նախաբան

Ուրախությամբ Ձեր դատին ենք հանձնում «Աշխարհի հայ նկարիչները» հրատարակության երկրորդ հատորը։ Այս նախաձեռնությունը շարունակությունն t նախորդ լոթ գրքերի, որոնք Ձեց ենք ներկալացրել ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության հետ համատեղ՝ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ։ 2016 թ. հրատարակված «Աշխարհի հայ նկարիչները» գրբի առաջին հատորում Ձեզ պատմել ենք մեծ համբավ վայելող այնպիսի նկարիչների մասին, ինչպիսիք են Արշիլ Գորկին, ժան ժանսեմը, Թեոդոր Աքսենտովիչը, Վարդգես Սուրենյանգը, Հովսեփ Փուշմանը և այլբ։ Իհարկե, ներկայացրել ենք նաև աշխարհահռչակ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն։ Այս հատորում ևս անդրադառնալու ենք մեծանուն հային. ավելին՝ այս հրատարակությունը նվիրվում է Հովհաննես Այվացովսկու ծևևդյան 200–ամյակին։ Ներկայացնելու ենք նկարչի ոչ այնքան հայտնի ստեղծագործությունները, քանի որ Այվազովսկու ազգանունն ամբողջ աշխարհում նույնացվում t ծովի հետ, այս անգամ որոշեցինք բոլորովին այլ տեսանկյունից ներկայացնել Այվազովսկուն՝ առանց ծովի։ Ինչպես այս շարքի առաջին յոթ գրքերում, այստեղ նույնպես ընդգրկված են շայաստանից դուրս բնակվող հայերի գործունեությանը նվիրված պատմություններ։

Մշակույթը Հայաստանի անբաժանելի մասն t: Հազարամյակների ընթացքում, ուրարտական դարաշրջանից սկսած, Հայաստանն անցել t մշակույթի զարգացման դժվարին և հետաքրքիր ճանապարհ։ Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել t ազգային, մշակութային բազմաթիվ ստեղծագործություններ, հոգևոր և նյութական արժեքներ։ Այստեղ ֆեզ կներկայացնենք 13–րդ դարի երկրորդ կեսի հայ կիլիկյան դպրոցի մանրանկարիչ Թորոս Ռոսլինին, որին ժամանակակիցները կոչել են Վերածնության նախակարապետ։ Կանդրադառնանք նաև 17–19–րդ դարերի հայ նկարիչների Հովնաթանյան ընտանիքին։ Չետեղել ենք նյութեր

նվիրված Արման Մանուկյանին, Շիմոն Հոլոշիին, Յան Ռուստեմին և այլ անվանի նկարիչների, որոնք հիմնականում գործել են արտերկրում։ Նրանք արվեստագետներ են, որոնց աշխատանքները ցուցադրվում են աշխարհի՝ լայն ճանաչում ունեցող թանգարաններում, և մեծ արժեք են ներկայացնում։

Այս շարքի ութերորդ հատորն ավարտում ենք անվանի հայ կինոռեժիսոր, սցենարիստ, նկարիչ Սերգեյ Փարաջանովին նվիրված նյութով։ Իհարկե, նա ողջ աշխարհում առավել մեծ ճանաչում ունի որպես կինոգործիչ, սակայն փարաջանովյան կոլաժները մեծ համբավ ունեն, և նրա ինքնատիպ աշխատան– քներին անդրադառնալը, կարծում ենք տեղին է։

Այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար ևս մեկ անգամ շնորհակալություն ենք հայտնում ՎիվաՍել–ՄՏՍ ընկերությանը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի, որը բազմաթիվ սոցիալական ծրագրերից բացի, ուշադրության կենտրոնում է պահում նաև մշակութային ձեռնարկները։ Ընկերության շնորհիվ միայն հնարավոր դարձավ իրականացնել սփյուռքը ներկայացնող այս յուրատեսակ հանրագիտարանը, որն արտացոլում է հայ ազգի հզորությունն ու տաղանդը։

շուսով ենք, որ այս հատորը ևս կհետաքրքրի Ձեզ։

Preface

We are delighted to present the second volume of the "Armenian Artists of the World" to your attention. This initiative is the continuation of the previous seven books that we brought into life in collaboration and with financial support of ViVaCeII–MTS. The first volume of the book, published in 2016, presented famous Armenian artists such as Arshile Gorky, Jean Jansem, Theodor Axentowicz, Vardges Surenyants, Hovsep Pushman, and many more. We certainly presented the life of the world known Armenian marine painter Hovhannes Aivazovsky. The latter occupies a special niche in the given volume as the edition is dedicated to the 200th anniversary of the artist. On this occasion the article here will cover the exhibitions and celebrations as well as the less recognized canvases of the painter - with or without sea. We have remained faithful to the tradition set in the previous seven books of this series and have shared stories of Armenian painters, who mostly lived and worked abroad.

As an integral part of the nation, the Armenian culture, starting from the times of Urartu, has passed a rocky, yet very distinctive path of development. Throughout the centuries, the Armenians have created numerous works of art, as well as spiritual and material values. A vivid example of such national genius is Toros Roslin, a miniaturist of the Armenian Cilician school of miniature of the second half of the 13th century, revered by his contemporaries as the 'Herald of Renaissance'. Among other artists of peculiar talent and artistic exquisiteness, whose works are exhibited in the world-renowned museums and have a great cultural value, are the 17th through 19th centuries painters of the Hovnatanian family, as well as Arman Manookian, Simon Hollósy, Jan Rustem, to name a few, who have mostly worked outside Armenia.

We sum up the 8th edition of this series with an article devoted to the famous Armenian filmmaker, screenwriter and painter Sergei Parajanov. Although the framework of this project would restrain the inclusion of the filmmaker, we sincerely believe that his intricate collages and pieces of non-cinematic art do deserve to be presented.

We would like to use this opportunity to once again express our sincere gratitude to VivaCell–MTS and its General Manager Ralph Yirikian, who has shown keen interest in the implementation of cultural projects along with social programs. We truly value the Company's efforts and commitments in the creation of this unique encyclopedia of the Diaspora, which allows to reflect over the power and the talent of the Armenian people.

We hope you will appreciate the 8th edition of this series.

«Համահայկական աշխարհագրական ասոցիացիա»

Երևան, 2017 թ.

Panarmenian Geographic Association

Yerevan, 2017







«Ծովն իմ տարերքն t. ինչքան tլ ապրեի, tլի որև t նոր բան կգտնեի այնտեղ»:

Հովիաննես Այվազովսկի

աննարեղ նկարչի կենսագրությանն ու ստեղծագործությանն անդրադարձել են բազում ուսումնասիրողներ, այդ թվում նաև մենք՝ «Աշխարհի հայ նկարիչները» գրքի առաջին հատորում։ Իհարկե, գոյություն ունի պահպանված հարուստ արխիվային նյութ, որը բացահայտում է նկարչի կենսագրության կարևոր ու առանցքային դրվագները։ Բայց և այնպես, Այվազովսկու անհատականության շատ ու շատ շերտեր դեռևս բացահայտված չեն։

Արդեն ավելի քան մեկ ու կես դար t, ինչ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու անունը նույնաց– վում t ծովի հետ. ասում ենք Այվազովսկի ու միանգամից պատկերացնում ենք ծով։

Շատ արվեստագետներ են սիրել և պատկերել ծովը, սակայննա է իրեն ամբողջությամբ նվիրել ծովին և փայլուն տաղանդի շնորհիվ բացառիկ ճշգրտությամբ փոխանցել է ծովի շարժումներն ու շունչն իր հազարավոր կտավներում։ Նրա մասին գիտեն բոլորը, նույնիսկ մարդիկ, որոնք շատ հեռու են արվեստից։ Վարպետ, որի կտավներում ծովը կենդանի է՝ արևով ողողված, հանդարտ, խիստ կամ ալեկոծված։ Նրա աշխատանքները դժվար է չճանաչել։ Սակայն «Աշխարհի հայ նկարիչները» հրատարակության երկրորդ հատորում, որն ինչպես արդեն ասել ենք նվիրվում է մեծ հայի ծննդյան 200-ամյակին, նրան միանգամայն այլ

"The sea is my passion. No matter how old I am, I would find something new there."

Hovhannes Aivazovsky

ust as many scholars and researchers, have studied the life and creations of the great artist, so we did in the first volume of Armenian Artists of the World. There is undoubtedly plethora of archival materials, that reveals the significant and pivotal episodes of the artist's biography. Nevertheless, the artist still remains in the focus of investigations and research.

For more than 150 years the name of the world-famous seascape painter Hovhannes Aivazovsky is being identified with the sea. The sea itself was inspirational and moving for the artist and thanks to the brilliant talent he had painted the movements and breath of the sea in his thousands paintings with exceptional accuracy. The canvases present the sea in a variety of states - alive, shining, calm, stormy. The second edition of the Armenian Artists of the World will present Aivazovsky from a different angle-discovering Aivazovsky without the sea. The landscapes have a remarkable place in Aivazovsky's paintings, which had been created during his trips. Apart from the landscapes of Russia and Ukraine, the artist repeatedly referred to Armenian nature. In this respect, the 1868 paintings are abundant with themes of Mount Ararat and other Armenian landscapes. Being a great humanist, with the great devotion to his nation and Homeland, he conveyed his ideas to mankind through his կողմից կանդրադառնանք՝ ներկայացնելով Այվազովսկուն՝ առանց ծովանկարների:

Այվազովսկու ստեղծագործության մեջ նշանակալի տեղ ունեն բնանկարները, որոնք նկարիչը կերտել t իր ճամփորդությունների ընթացքում: Բացի Ռուսաստանի և Ուկրաինայի տարածքներում արված բնապատկերներից, նկարիչը բազմիցս անդրադարձել t նաև Հայաստանի բնության պատկերմանը:

Այս առումով մասնավորապես բեղումնավոր t եղել 1868 թ., երբ Այվազովսկին ճամփորդելով Հայաստանի տարածքով, Նկարել t Արարատյան դաշտավայրը, Արարատ լեռը և մի շարք այլ բնապատկերներ: artistic genius and refined skill. During his long and fruitful activity which lasted over 60 years, Aivazovsky created about 6,000 canvases.

On the occasion of the artist's 200th anniversary, many events have been organized in the countries where the great master had lived and worked. In 2016 Moscow's Tretyakov Gallery launched an international project – a retrospective monographic exhibition of Ivan Aivazovsky from July–November. Aivazovsky was introduced to the public not only as a master of sincere, romantic feelings but also the bearer of deep ideas and symbols.

One of the organizers' main goals was to acquaint the young generation with the artist's works. In particular with this



2ողմաղացներն ուկրաինական տափաստանում` մայրամուտին Windmills in the Ukrainian steppe at sunset

1862



Լինելով մեծ մարդասեր, ունենալով նվիրվածություն իր ազգին և հայրենիքին՝ նա գեղանկարչական իր հանճարով և մեծ վարպետությամբ իր գաղափարները փոխանցել է մարդկությանը:

Երկարատև՝ ավելի քան 60 տարվա անընդմեջ ու բեղմնավոր գործունեության ընթացքում Այվազովսկին ստեղծել է շուրջ 6000 կտավ:

Նրա 200–ամյա հոբելյանի առթիվ՝ միջոցառումներ են կազմակերպվել բոլոր երկրներում, որտեղ ապրել ու ստեղծագործել է մեծ վարպետը։

Մոսկվայի Տրետյակովյան պետական պատկերասրահը 2016 թ. ներկայացրեց բազմածավալ միջազգային նախագիծ. հուլիս-նոյեմբեր ամիսներին կազմակերպվեց Հովհաննես Այվազովսկու հետահայաց ցուցադրությունը։ Այվազովսկին հանրությանը ներկայացավ ոչ միայն որպես անկեղծ, ռոմանտիկ զգացմունքներ արտահայտող վարպետ, այլև խորը գաղափարների և խորհրդանիշների կրող։ Այցելուները նրան ճանաչեցին որպես հեռատես մի մարդու, որը կարողացել է կանխատեսել հաջորդ հարյուրամյակի աղետները։



Գյուղ Գունիբ, Դաղստան. Արևելյան կողմի տեսարան Village Gunib, Daghestan, Eastern View





Ձմեռային տեսարան Winter landscape Ձմեռային տեսարան Մալոռոսիայում Winter scene in Little Russia 1868




Կազմակերպիչների գլխավոր նպատակը երիտասարդ սերնդին Այվազովսկու աշխատանքների հետ ծանոթացնելն էր։ Մասնավորապես այս խնդրի լուծման նպատակով Տրետյակովյան պատկերասրահում առաջին անգամ անցկացվեց շովհաննես Այվազովսկու աշխատանքների ցուցադրությունը. ներկայացվեց 120 աշխատանք։ Ցուցադրության առաջին իսկ օրերից պարզ դարձավ, որ հանրության հետաքրքրությունն իսկապես ավելի մեծ է լինելու։ Ըստ պատկերասրահի տվյալների՝ Այվազովսկու աշխատանքները դիտելու է եկել 598 832

22 Կենտրոնական բանկը 2017 թ. հունվար ամսից շրջանառության մեջ է դրել «Հովիաննես Այվազովսկի–200» ոսկե հուշադրամը։ aim for the first time in the Tretyakov Gallery, a large-scale demonstration of Hovhannes Aivazovsky's works was held where 120 works were presented attracting more than a half million visitors.

In January of 2017 the Central Bank of Armenia issued a gold commemorative coin in respect to the artist's 200th anniversary. The National Bank of Ukraine had also issued a commemorative coin in 250 thousand copies, as well as a stamp dedicated to the 200th anniversary of Hovhannes Aivazovsky.

An exhibition dedicated to the above mentioned events was also organized in Ukrainian Nikolayev. 9 works were presented at the exhibition entitled as "200 Years of Triumph".








Թիֆ<u>լ</u>իս

Tiflis

1886



Ինքնանկար Self-Portrait **1898**





Հովիաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակի առթիվ Ուկրաինայի Ազգային բանկը ևս թողարկել t hուշադրամ՝ 250 հազար տպաքանակով, ինչպես նաև գեղարվեստական նամականիշ: Առասպելական ծովանկարչի ծննդյան 200-րդ տարեդարճի նվիրված ցուցահանդես է կազմակերպվել նաև Ուկրաինայի Նիկոլաև քաղաքում։ Ցուցահանդեսին ներկայացվել է 9 աշխատանք՝ «200 տարվա հաղթանակ» խորագրով։















Ծովանկարչի ստեղծագործական ժառանգությունն, անցնում t վեց տասնյակի սահմանը, և զարմանալի չt, որ նրա աշխատանքները հայտնվում են ամենատարբեր երկրների թողարկած նամականիշների վրա։ Իհարկե, դիմանկարով ու ստեղծագործություններով նամականիշները սկսել են թողարկվել ԽՍՀՄ երկրներում։ Սակայն վերջերս դրանք հատել են նաև օվկիանոսներ ու հայտնվել անգամ աֆրիկյան նամականիշների վրա։


As it is known, the marine painter's creative heritage exceeds 6,000 and the artist's paintings and portraits are found on stamps issued by different countries. Initially the first stamps with Aivazovsky's motives were released back in the Soviet Republics. The latest ones went beyond the neighbouring countries and are present even on African stamps.



4

จนพยาเย Snowstorm **1874**







այ նկարիչ Այեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը ծնվել t 1891թ. Թիֆլիսում։ Տեղի գեղարվեստի դպրոցի **երեկոյան դասընթացներն ավարտելուց հետո** Ալեքսանդրը շարունակում t ուսումը Թիֆլիսի Գեղեցիկ արվեստները խրախուսող կովկասյան ընկերության գեղակկարչության և քանդակագործության դարոցում։ 1910 թ. Ալեքսանդրը մեկնում է Մոսկվա՝ ուսանելու նկարիչ Վասիլի Մեշկովի արվեստանոցում։ 1911–12 թթ. սովորում t Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում։ 1913 թ. զորակոչվում է բանակ, մասնակցում Առաջին աշխարհամարտին, 1917 թ. վերադառնում Թիֆլիս։ 1919 թ. Այեքսանդրը հանդիպում է առաջին կնոջը՝ Նեկտարին, նրանք ունենում են մեկ դուստր՝ Լավինիային։ Ավելի ուշ Այեքսանդրն ամուսնանում t երկրորդ անգամ՝ Լիդիա Մեշկորուդնիկովայի հետ, ունենում երկու զավակ՝ Վազգենին և Ջուլելկային։ Նկարչի երեք զավակներն էլ են դառնում արվեստագետներ։ 1922-29 թթ. Ալեքսանդրո դասավանդում է Թիֆլիսում՝ վրացի նկարիչ Մոսե Թոիձեի գեղարվեստական ստուդիայում, իսկ ավելի ուշ՝ 1929-38 թթ.՝ Թիֆլիսի Գեղարվեստի ակադեմիայում։ 1920ական թթ. Բաժբեուկ-Մելիքյանի արվեստը նշանակալի ազդեցություն t ունեցել վրացական ավանգարդ արվեստի ցարգացման վրա։ Նա բարեկամական կապեր t հաստատում ժամանակի խոշոր մտավորականների, մասնավորապես հայ գրող, թարգմանիչ Կարա-Դարվիշի, վրացի նկարիչ Դավիդ Կակաբաձեի, հայ մեծ բանաստեղծ եղիշե Չարենցի հետ։ Արվեստագետը տարբեր ցուցաhանդեսների t մասնակցում, որոնց շարքում առանձնանում է 1918 թ. վրացի նկարիչ Լադո Գուդիաշվիլիի հետ համատեղ Թիֆլիսի ցուցահանդեսը։ 1935 թ. Երևանում կազմակերպվում է նկարչի աշխատանքների ցուցադրութ-


he Armenian artist, sculptor, graphic designer Alexander Bazhbeuk-Melikyan was born in 1891, in Tiflis. After finishing the evening classes of the local art school Alexander continued his education at the School of Art and Sculpture of the Caucasus Society for the Encouragement of the Fine Arts. In 1910 he left for Moscow, taking classes at the studio of the Soviet artist Vasiliv Meshkov, afterwards, in 1911-1912, he studied at the St. Petersburg Academy of Arts. In 1913 he was conscripted into the army and participated in World War I; upon his return to Tiflis in 1917, he launched his own artistic career. In 1919 he met his first wife Nektar, they had a daughter - Lavinia. Later Alexander married for the second time to Lydia Meshkorudnikova. and had two children - Vazgen and Zuleika. All the three children of Alexander have become artists. Between 1922 and 1929 Bazhbeuk-Melikyan taught at the studio of the Georgian painter Mose Toidze, following which he lectured at the Georgian Academy of Arts. It should be noted that in the 1920s Bazhbeuk-Melikyan played a significant role in the rise of avant-garde in Georgia, keeping friendly ties with the major intellectuals, particularly with the Armenian writer, translator Akop Kara-Dervish, Georgian painter David Kakabadze, Armenian outstanding poet Yeghishe Charents.

During his life the artist took part in various exhibitions, among which stand out the one in 1918 in Tiflis; another exhibition, together with the Georgian painter Lado Gudiashvili in Yerevan in 1935, when the audience warmly welcomed his compatriot; finally, three posthumous exhibitions in Yerevan, Moscow and Tiflis in 1968, which once again revealed the artist's talent. He paid frequent visits to

յունը. hայ հասարակությունը ոգևորությամբ է ընդունում իր հայրենակցին։ 1968 թ. հետմահու երեք ցուցահանդեսներ են բացվում Երևանում, Մոսկվայում և Թիֆլիսում։ 1960ական թվականներին նկարիչը հաճախակի է այցելում շայաստան, մտերմանում հայրենիքում գործող արվեստագետների, այդ թվում՝ Մինաս Ավետիսյանի հետ։ 1966 թ. նրան շնորհվում է Վրաստանի ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի բարձր կոչում։ Թեպետ Բաժբեուկ-Մելիբյանն ապրել է ծանր սոցիալական պայմաններում (սեփական բնակարանն օգտագործել t որպես արվեստանոց), սակայն ողջ կյանքի ընթացքում սիրել ու նվիրված t եղել իր արվեստին։ Ժամանակակիցների վկալությամբ՝ նա մեծ դժվարությամբ t բաժանվել իր կտավներից ու ծանր է տարել դրանց վաճառքը։ 1964-66 թթ. Բաժբեուկ-Մելիքյանը, չնայած առողջական խնդիրներին, շարունակում t ստեղծագործել։ Կնքում

Armenia during the 1960s, drawing close to the artists in the homeland such as the well–known painter Minas Avetisyan. In 1961, he was awarded the title of the Honored Artist of the Georgian Soviet Socialist Republic. Bazhbeuk–Melikyan had hard social conditions, using his apartment as a studio, but even the desperate need could not get him to give up his passion for art. According to contemporaries, he hardly parted with his paintings and took the sale of his canvases close to his heart. Despite his health problems, between 1964 and 1966 Bazhbeuk–Melikyan continued to create canvases. He passed away in the summer of 1966 in Tiflis.

In spite of his European classical education in the arts, the master was mainly considered as the adherent of new movements. Bazhbeuk-Melikyan's works are ruled by flirty, charming, often half-naked women, which are presented



Օրթաճալաի ջրաղացը The Mill at Ortachaly

t իր մահկանացուն 1966 թ. ամռանը Թիֆլիսում։ Թեև նկարիչն ուներ եվրոպական դասական կրթություն, այնուամենայնիվ առավելապես կերպարվեստի նոր հոսանքների հետևորդ էր։ Բաժբեուկ–Մելիքյանի աշխատանքներում իշխում են հմայիչ, հաճախ կիսամերկ կանայք, որոնք կա՛մ զմայլվում են հայելու մեջ արտացոլվող իրենց պատկերներով, կա՛մ զրուցում են միմյանց հետ, կա՛մ լոգանք են ընդունում։ Արվեստագետը բազմիցս ներկայացրել է կրկեսն ու թատրոնը իր կտավներում՝ կրկին կիրառելով կանանց այլաբանական կերպարները։ Նրա հետաքրքրության շրջանակներում էին նաև կովկասյան հին քաղաքների նեղ ու խորհրդավոր փողոցները։ Նկարիչը սիրում էր պատկերել իր երկու դուստրերին՝ թատերային–ռոմանտիկ կերպավորումներում. հայտնի են «Լավինիան իսպանական գլխարկով», «Չուլեյկան


marveling at their own images reflected in the mirror or talking to each other in active gestures or just taking the bathe. The artist frequently presented circus and theatre scenes in his canvases, using again female allegorical figures. The narrow and mysterious streets of the ancient cities of the Caucasus were in the frames of his interests as well.

The artist liked to depict his two daughters in theater and romantic portrays; the most known ones are the portraits Lavinia in a Spanish Hat, Zuleika in a white gown. Some of the painter's famous works are Floating Women (1929), Women in the Mirror (1941) Zangezur (1965). It is important to note that the artist several times referred to the image of Yeghishe Charents in 1920s, presenting him in different emotional moods.



 $\textcolor{red}{\blacktriangle}$

Մերկ կինը The naked **1940** Իմ արհեստանոցը My studio **1946**



ներմակ զգեստով» դիմանկարները։ Նկարչի հայտնի աշխատանքներից են նաև «Լողացող կանայք» (1929 թ.), «Կանայք հայելու առջև» (1941 թ.), «Չանգեզուր» (1965 թ.)։ Կարևոր է նշել, որ 1920-ական թվականներին նկարիչը մի քանի անգամ անդրադարձել է Եղիշե Չարենցի կերպարին՝ ներկայացնելով նրան տարբեր հուզական ապրումների մեջ։

22 Կենտրոնական բանկը 2016 թ. Ալեքսանդր Բաժբեուկ– Մելիքյանի ծննդյան 125–ամյակի առթիվ թողարկել t «Ալեքսանդր Բաժբեուկ–Մելիքյան–125» արծաթե հուշադ– րամը։


Ավագ դուստրը՝ Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը, ծնվել է 1922 թ. Թիֆլիսում։ Հայրը նրան Լավինիա է անվանել իտալացի նշանավոր նկարիչ Տիցիանի դստեր պատվին։ 1935 թ. Լավինիան տեղափոխվում է Երևան, 1941–44 թթ. ուսանում Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, իսկ 1951 թ. ավարտում Մոսկվայի Սուրիկովի անվան գեղարվեստի ինստիտուտը։ 1951 թ. աշխատում է ռուս նկարիչ Պավել Կորինի արվեստանոցում` րնդգրկվելով Մոսկվայի Մետրոպոլիտենի «Կոմսոմոլսկայա» կայարանի խճանկարային պաննոների ստեղծման աշխատանքներում։ 1951 թ. սկսում է ակտիվ մասնակցել հանրապետական, համամիութենական ու միջազգային ցուցահանդեսներին։ 1954 թ. դառնում է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ։ 1962 թ. մասնակցում t Երևանում կազմակերպված, «Հինգի» ցուցահանդեսին՝ նկարիչներ Մինաս Ավետիսյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Արփենիկ In 2016 the Central bank of RA launched "Alexander–Bazhbeuk Melikyan –125" silver coin dedicated to the 125th anniversary of the painter.

The elder daughter, Lavinia Bazhbeuk-Melikyan was born in 1922 in Tiflis. Her father named her after the daughter of the world-known Italian artist Titian. In 1935 Lavinia arrived in Yerevan, between 1941 and 1944 she studied at Panos Terlemezian Artistic College, and in 1951 she already graduated from the Moscow State Art Institute after V. Surikov. Since 1951 she worked at the Russian painter Pavel Korin's studio and worked on the creation of the mosaic panels for Moscow "Komsomolskaya" underground station. She began to actively take part in republican, all-union and international exhibitions since 1951. In 1954 she became a member of the USSR Artists' Union. In 1965 Lavinia traveled to Bulgaria to present Armenian culture. In 1967 she was awarded the title of Honored Artist of the Armenian Soviet Socialist Republic. She was honored a gold medal in 1970 for her participation in the group exhibition of the Armenian artists in Moscow. In 1974 she was awarded a special diploma of the USSR Academy of Fine Arts for her series of portraits. Among the exhibitions of Lavinia the one in 1979 in Yerevan and the other one in 1980 in Moscow were most remarkable. In 1962 she participated in the so called "Exhibition of Five" together with the Armenian artists Minas Avetisyan, Alexander Grigoryan, Arpenik Ghapantsyan and Henrik Siravyan. The more distinguished ones of her works are the portraits of the famous









Լավինիա Բաժբեուկ–Մելիքյան.

Մարտիրոս Սարյանի դիմանկարը Portrait of Martiros Saryan **1972**

Վազգեն Բաժբեուկ–Մելիքյան

Տեսարան պատուհանից A view from the window 1988



Ղափանցյանի և Հենրիկ Սիրավյանի հետ։ 1965 թ. մեկնում t Բուլղարիա՝ հայկական մշակույթը ներկայացնելու, իսկ 1967 թ. արժանանում է Հայաստանի ԽՍՀ վաստակավոր նկարչի կոչման։ 1970 թ. նրան շնորհվում է ոսկե մեդալ՝ Մոսկվայում հայ նկարիչների խմբակային ցուցահանդեսին մասնակցելու համար։ 1974 թ. արժանանում է ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի հատուկ դիպլոմի՝ դիմանկարների շարքի համար։ Լավինիայի ցուցահանդեսների շարքում աչքի են ընկնում 1979 թ. Երևանի և 1980 թ. Մոսկվայի ցուցահանդեսները։ Լավինիայի աշխատանքներից առանձնանում են իր ժամանակի հայտնի մտավորականների դիմանկարները, սեփական ինքնանկարները և հոր՝ Ալեբսանդրի դիմանկարը։ ժամանակակիցներն արժևորել են Լավինիայի նատյուրմորտները, որոնք կովկասյան տարրերով համեմված պարզ ու հարթ հորինվածքներ են, ինչպես նաև հայ աշխատավոր ու գեղջուկ կանանց ներկայանալի դիմանկարները։ Ըստ որոշ աղբյուրների՝ 2003 թ. անհայտ անձինք մուտք են գործում Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի՝ Երևանի Տերյան փողոցում գտնվող բնակարանը՝ գողանալով հոր՝ Ալեքսանդրի շուրջ 21նշանավոր կտավները։ Մեղավորներն այդպես էլ չեն բացահայտվում։ Սույն դեպքի պատճառով Լավիկիան ծակր ապրումներ է ունենում, ծագում են առողջական լուրջ խնդիրներ։ Մահացել t 2005 թ.

Չուլեյկա Բաժբեուկ-Մելիքյանը ծնվել է Թբիլիսիում 1939 թ.։ Գեղակկարչություն սովորել t hnրից: 1964–65 թթ. սովորել t 3. Նիկոյաձեի անվան ուսումնարանում։ 1966 թ. Թբիլիսիի նկարիչների միության անդամ t: 2009 թ. հաստատվել t Երևանում։ Չնմանակելով hnր ոճը՝ շուլեյկան ստեղծել t ուրույն ձեռագիր։ Նրակտավները պահվումեն Հայաստանի ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Արևելյան ժողովուրդների արվեստի պետական, Մոսկվայի ժամանակակից արվեստի, Լյուդվիգթանգարաններումև Բուլղարիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Կանադայի, ԱՄՆ-ի մասնավոր հավաքածուներում։ 1966 թ. մասնակցել t hամամիութենական, hանրապետական, միջացգային ցուցահանդեսների։ Ունեցել է նաև անհատական ցուցահանդեսներ։ «Կարուսել» կտավի համար 1987 թ., ճապոնիայում արժանացել t ոսկե մեդալի։ 2001 թ. Վրաստանի գեղանկարչական դպրոցի զարգացման և իալ-վրացական հարաբերությունների ամրաանդման hամար արժանացել t Վրաստանի պատվո բարձրագույն շքանշանի:



intellectuals of her time, the self–portraits and as well as the portrait of her father Alexander. The contemporaries highly appreciated Lavinia's still lifes with their plain and smooth compositions spiced with Caucasian elements, as well as impressive portraits of the Armenian peasant women and people of working class. According to some sources, in 2003 unknown persons broke into Lavinia Bazhbeuk–Melikyan's apartment located in Yerevan, Teryan Street, stealing about 21 famous paintings of her father Alexander.The perpetrators had not been disclosed, and because of this incident Lavinia was distressed, and developed serious health problems. She died on November 8, 2005.

Zuleika Bazhbeuk-Melikyan was born in 1939 in Tbilisi. She learned to paint from her father. 1964-1965 she studied in the Nikoladze Art College in Tbilisi. Since 1966 she has been a member of the Artists' Union of Georgia. She moved to Yerevan in 2009. Without imitating her father's style, Zuleika chose her own path. From 1966 she started to participate in the All-Union, republican and international exhibitions among which some were personal exhibitions. In 1987 she won a gold medal for the painting "Carrousel" in Japan. 2001 Zuleika won the highest award of Honor of Georgia for development of the School of Arts and strengthening Armenian-Georgian relations. Her works were displayed at the Armenian National Gallery, Museum of Modern Art in Yerevan, Tretvakov Gallery in Moscow, in the State Museum of Art of Eastern Peoples, Museum of Modern Art in Moscow. in Ludwig Museum and also in private collections in Bulgaria. Russia, Germany, France, Italy, Canada and USA. Alexander Bazhbeuk-Melikian's son, Vazgen was born in Tbilisi in 1941. He learned to paint under the tutelage of his father. In his memoirs Vazgen wrote: "Everything started in 1957, when I first took the brush and painted a chicken. My father was amazed. Then I painted roses and then something else. So I felt the blessing of drawing". In 1968-73 he studied at the Moscow State Textile Institute. In 1977 he moved to Yerevan. Five years later he became a member of the Artists' Union





Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի որդին՝ Վազգենը, ծնվել t Թբիլիսիում 1941 թ.: Նա ևս նկարել սովորել t hորից։ Իր հուշերում Վազգենը գրել t. «Ամեն ինչ սկսվեց 1957 թ., երբ առաջին անգամ ձեռքս առա վրձինն ու նկարեցի անշարժ նստած հավին։ Հայրս զարմացավ։ Հետո վարդեր նկարեցի, հետո էլի ինչ-որ բան։ Այսպես զգացի նկարելու երանությունը»: 1968-73 թթ. սովորում է Մոսկվայի պետական տեքստիլ ինստիտուտում։ 1977 թ. տեղափոխվում է Երևան։ շինգ տարի անց անդամակցում է Հայաստանի նկարիչների միությանը։ Վազգեն Բաժբեուկ-Մելիքյանի աշխատանքները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, ժամանակակից արվեստի և Սերգեյ Փարաջանովի թանգարաններում, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Lեհաստանի, Կիպրոսի, Թուրքիայի և աշխարհի այլ երկրների մասնավոր հավաքածուներում։ 2004 թ. մայիսի 27–ին նկարիչը ինքնասպան է եղել։

of Armenia. Vazgen Bazbeuk-Melikyan's works are held in the National Gallery of Armenia, in the Modern Art Museum (Yerevan), in Sergei Parajanov Museum (Yerevan), in private collections in Armenia and abroad. On May 27, 2004, Vazgen committed suicide.









1960–ական թվականների կեսերին տեղափոխվել է Մոսկվա, աշխատել «Լիտերատուրնայա գազետա»–ում։

Նրա կյանքն ու ստեղծագործությունը բազմիցս քննարկվել t խորհրդային այլախոհական շարժման շրջանակում, քանի որ նա մեկն tր «հայրենիքի այն դավաճաններից», որոնք 1974 թ. լքեցին Խորհրդային Միությունն ու տեղափոխվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Արտագաղթելով ԱՄՆ՝ նա ծավալել է ստեղծագործական ակտիվ գործունեություն։ Նա հայտնի էր իր սրամիտ բառախաղերով ու ասույթներով, որոնք այլախոհական մշակույթի անբաժանելի մասն էին։ Ձերմ ընկերական hարաբերություններ ուներ Սերգել Դովյաթովի, Յուրի Միլոսլավսկու, Էդուարդ Լիմոնովի հետ։ Հենց Բախչանյանի առաջարկով Էդուարդ Սավենկոն ընտրել է Լիմոնով կեղծանունը։ Բախչանյանն t «Մենք ծնված ենք, որպեսզի Կաֆկան իրականություն դարձնենք», «Արվեստը ժողովրդի համար է, և այն ունի զոհաբերության կարիք» թևավոր խոսքերի հեղիկակը։ Խորհրդային գրաքննությունն ու պրոպագանդան չեն խրախուսել ստեղծագործողի երգիծական արվեստը, և միայն ԱՄՆ-ում ներգաղթած ռուս գորոներ Փիթեր Ուելլն ու Ալեքսանդր Գենիսն են նրան ընդգրկել Նյու Յորքում տպագրվող «Յոթ օր» ռուսալեզու պարբերականի ստեղծագործական կազմում։

«Խորիրդային ավանգարդի նահապետ», «վերջին ֆուտուրիստ», «պեղածո գազան». այսպիսի բնորոշումներով են արվեստի քննադատները ներկայացրել Բախչանյանին և նրա ստեղծագործությունը, որը բաժանվում է երկու՝



Soviet-American avant-garde and conceptual artist and writer Vagrich Bakhchanyan was born to Armenian family in 1938 in Kharkiv, Soviet Ukraine, where he started to paint.

In the mid–1960s he moved to Moscow, where he worked as a leading caricaturist at "Literaturnaya Gazeta". His life and work have been examined within the scope of the Soviet dissident movement and dissident discourse, as he was "one of those traitors" who left the Soviet Union and moved to the United States in 1974.

Bakhchanyan was known for his witty puns and sayings many of which became an intrinsic part of Soviet dissident culture. He was in warm friendly relations with Sergey Dovlatov, Yuri Miloslavski, Eduard Limonov. It was Bakhchanyan who proposed Edward Savenko to take the pseudonym "Limonov." He owns the phrases "We were born to make Kafka a reality", substituting the word "fairy-tale" for "Kafka"; "Artis for people and it needs sacrificing", etc. Due to Soviet propaganda and censorship, a master of caricature art was not appreciated. It was only in the United States where his satirical drawings were included in the covers of the Russian language periodical "Seven Days" published in New York by Russian immigrant writers Peter Weil and Alexander Genis.

"The Patriarch of Soviet avant-garde," "The Last Futurist," – with such characterizations the art critics described Bakhchanyan and his work, which is conventionally divided into two periods, Moscow (1967–74) and New York (1974–2009).


The early creations of the artist drift towards the absurd, typical of Oberiu and Dada in general. He used transfer techniques to collage fragments of images from magazines and


մոսկովյան (1967–74 թթ.) և նյույորքյան (1974–2009 թթ.) շրջանների։

Աբսուրդի ոճով ստեղծած նրա վաղ ստեղծագործություններն արված են դադաիստական և օբեր ոճերին բևորոշ տրամաբանությամբ։ Նա կերտել է աբստրակտ նկարներ՝տարբեր ամսագրերից և թերթերից վերցրած հատվածների կոլաժավորմամբ։ 1964 թ. անանուն պատկերը դրա վառ օրինակն է, որտեղ վատ ընթեռնելի նամակի վրա նշմարվում t մի մարդու դիմանկար։ Այլայլախոհ հայացքները և խորհրդային ռեժիմի հանդեպ իր վերաբերմունքը արտացոլել t նաև կոլաժային պատկերների մեջ, որտեղ որպես հիմք օգտագործել t խորհրդային տարիների պաշտոնական հայտարարություններից արված հատվածները։ Կոլաժի նկատմամբ հետաքրքրությունը չի նվացել նաև Նյու Յորքում, որտեղ կոնցեպտուալ արվեստի ոճով նա ստեղծել t խորհրդային ռեժիմը խորհրդանշող մի շարք աշխատանքներ՝ կիրառելով այդ շրջանում ճանաչված խորհրդանիշներ, ինչպիսիք էին ղեկավարների դիմանկարները, կարմիր դրոշը, և, առհասարակ, կարմիր գույնը։ Եվ եթե Խորհրդային Միությունում այդպես նա փորձում tր ըմբոստանալ խորհրդային իրականության կեղծ գաղափարախոսության դեմ, ապա Միացյալ Նահանգներում այն արվեստագետի համար դառնում t գոյատևելու

newspapers into abstract compositions. This absurdist leaning is evident in the Untitled from 1964 – a page from a barely legible handwritten letter superimposed with a portrait of a man. His non–conformist views were displayed on paper in which appropriated texts and images were combined and layered using transfer techniques, and official notices by Soviet administrators. He joined the army of dissident artists representing subversive art and strongly rejected by the Soviet regime.

Working in New York, Bakhchanyan referred to recognizable symbols of the Soviet regime — the leaders' portraits, the official banner, the color red — using them in conjunction with gestures and strategies borrowed from the conceptual art. While in the Soviet Union Bakhchanyan applied the absurd to reveal ideological falsity and pretense of Soviet reality, in the US, the absurdist quality of this art became diluted, transformed into a narrated, staged and archived record of his daily existence. To create his "First Russian Propaganda Art Performance" (1978), he went to the MOMA wearing scores of communist and absurdist slogans pinned to his clothes. For his 1975 project "Red Week (Diary)," he picked an everyday object for each day of one week, May 15 through May 21, and painted it a deep red. The "Diary" drawings cover a year in the life of the artist – the colorful pages include ticket stubs, de-





միջոց։ Շատ հաճախ, Բախչանյանը բեմականացնում էր իր աշխատանքները, ինչպես 1978թ. «Ռուսական արվեստի պրոպագանդայի բեմադրություն» վերնագրով ցուցահանդեսի դեպբում, որի ժամանակ նա այցելում է ժամանակակից արվեստի թանգարանը՝ իր հագուստի վրա կրելով կոմունիստական լոզունգներ պարունակող շքանշաններ։ 1975թ. «Կարմ շաբաթ. օրագիր» խորագրով կազմակերպված ցուցահանդեսին նա ներկայացնում է նկարների մի շարբ, մայիսի 15-ից մինչև մայիսի 21-ը ընկած ժամանակահատվածում նա ամեն օր նկարում էր մեկ տարվա ապրած կյանքը խորիդդանշող որևէ մեկ իր և այն ներկում ալ կարմիր գույնով։ Հիշարժան է 1977թ. մեկ օրում «Խնայիր ժամանակը» խորագրով Նյու Յորքի 30 տարբեր պատկերասրահներում 30 ցուցահանդեսների անցկացումը։

Նա ցուցահանդեսներ է ունեցել Պոմպիդուի անվ. կենտրոնում, Տրետյակովյան պատկերասրահում և բազում այլ հեղինակավոր կենտրոններում։ Բոլոր այս ցուցահանդեսների հետևում թաքնված է անհատի իրական կյանքը, որը միշտ չէ, որ հարթ է ընթացել։ Բախչանյանը միշտ էլ հայտնի է եղել, բայց միայն կյանքից հեռանալուց հետո Ռուսաստանում և այլուր սկսեցին խոսել նրա աշխատանքների մնալուն արժեք լինելու մասին։

Նրա գործերը պահվում են այնպիսի մշտական հավաքածուներում, ինչպիսիք են Յակոբ և Քենդա Բար-Գերայի հավաքածուն Քյոլնում, Ժամանակակից արվեստի կենտրոնը Մոսկվայում, Տրետյակովյան պետական պատկերասրահը, Ռուսական պետական թանգարանը Սանկտ Պետերբուրգում, Փոլ Գեթթի անվ. արվեստի թանգարանը Լոս Անջելեսում և այլն։ Բախչանյանը նաև պիեսների հեղինակ է։

Թեպետ նա երբեք չի եղել Հայաստանում և հայերենին չի տիրապետել, սակայն բազմիցս ընդգծել է իր արմատները։ Հայտնի են նրա խոսքերը Մարտիրոս Սարյանի մասին. «Ոչ ոք, ինձնից բացի, այդպես չի հասկանում Սարյանին»։ Բախչանյանը հաճախ է կատակով կրկնել, թե ինքը «հայ է 150 տոկոսով, քանի որ հայ է եղել անգամ իր խորթ մայրը»։

Նկարիչը մահացել է 2009 թ. 72 տարեկանում։ Պատճառը չի նշվել, սակայն նկարչական ցուցահանդեսների հայտնի կազմակերպիչ Մարատ Գելմանը իր բլոգում գրել է, թե Բախչանյանն ինքնասպան է եղել։ Նրա կամքի համաձայն՝ աճյունի մոխիրը ցրել են Գեղամա լեռներում։

2012թ. սեպտեմբերին Նարեկացի արվեստի միության ցուցասրահում բացվել է Վահրին Բախչանյանի աշխատանքների առաջին անհատական ցուցահանդեսը Հայաստանում։ Ցուցահանդեսի բացման առթիվ Նյու Յորքից հատուկ Երևան են ժամանել նկարչի կինը՝ Այրին Բախչանյանը, և կինոռեժիսոր Անդրեյ շագդանսկին, որը 2015 թ. ստեղծել է «Վահրիճը և սև քառակուսին» ֆիլմ–կոլաժը։

constructed images, faces and swirls of color; some feature short texts that hint at meaning. The 1977 was a memorable year, as he had 30 exhibitions in one day in 30 different galleries in New York entitled as "Save the Time".

He had exhibitions at the Pompidou Center, Tretyakov Gallery, and many other prestigious centers. His works are included in such famous permanent collections as Jacob and Kenda Bar–Gera's collection in Cologne, Center for Contemporary Art in Moscow, Tretyakov Gallery, The State Russian Museum in St. Petersburg, Paul Getty Museum of Art in Los Angeles, Yerevan Modern Art Museum, etc. He is also an author of several plays.


He had never been to Armenia and hardly knew the Armenian language, however, had a great interest towards Armenia. Famous are his words dedicated to M. Saryan: "No one but me is able to understand Saryan so well." Bakhchanyan often joked saying that "he is 150 percent Armenian, even his stepmother was Armenian." The artist died in 2009, at the age of 72. According to his last will, his ashes were scattered high in the Geghama mountains.

In September 2012 the Narekatsi Art Institute hosted Vagrich Bakhchanyan's first personal exhibition in Armenia. On an opening of the exhibition the artist's widow Irene Bakhchanyan was invited from New York as well as the filmmaker Andrei Zagdansky, who created "Vagrich and the Black Square" collage film in 2015.














Վրձնանկարներ Brush Drawings **2000s**










անոս Թերլեմեզյանը ծնվել է 1865 թ. մարտի 11-ին Արևմտյան Հայաստանի պատմական Վասպուրական նահանգի Վան քաղաքում, հողագործի ընտանիքում։ Նա մեծացել է բազմացավակ ընտանիքում, ունեցել է ինո քույո և մեկ եղբալո, վերջինս մանուկ հասակում մահացել t: Թերլեմեցյանը նախնական կրթությունն ստանում t Վանի տարրական դպրոցում, 1881թ. դառնում է Մկրտիչ Փորթուգալյանի հիմնած Կենտրոնական վարժարանի սան, որը ժամանակակիցների վկալությամբ Վասաուրականում միակ հեղինակավոր կրթական հաստատությունն tր: Թուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր կրթօջախի աշխատանքները դադարեցնելու համար։ 1885 թ. Փորթուգայանն աբսորվում է Պարսկաստան, իսկ վարժարանը փակվում է։ Վաղեմի երացանքն իրականացնելու նպատակով 1895 թ. նա մեկնում է Պետերբուրգ՝ ուսանելու Գեղարվեստի ակադեմիայում։ Երկու տարի անց մի քանի լեհ նկարիչ ուսանողների հետ վճռում է նկարչական էտյուդներ անելու նպատակով մեկնել էստոնիա։ Թեև Թերլեմեզյանը գտնվում էր հայրենիքից հեռու, սակայն անկարող էր անտարբեր մնալ Արևմտյան Հայաստանում ծավայվող դեպքերի հանդեպ։ Նա շարունակում է նամակագրությամբ ոգևորել Պոլսում և Վանում ապրող հայ երիտասարդներին։ Այդ նամակագրությունը չի վրիպում թուրքական իշանո թյունների ուշադրությունից. արդյունբում 1897 թ. ձերբակայվում t և երեք տարի անցկացնում Ռևելի բանտում։ շետագայում լրացուցիչ քննության համար նրան տեղափոխում են Թիֆլիսի Մետեխի բանտ, այնտեղից էլ աքսորում Պարսկաստան։ Անգամ այս պայմաններում նկարիչը շարունակում t ստեղծագործել։ 1899 թ. Թերլեմեզյանը կարողանում է ձեռք բերել նոր անձնագիր և մեկնել Ֆրանսիա։ Փարիզում չորս տարի նկարիչը սովորում t


Մկրտում Հովնաթանյանը՝ Հովնաթանյանների տոհմի չորրորդ սերնդի ներկայացուցիչը, ծնվել է 1779 թ. Թիֆլիսում։ Նա վաղ հասակից աշակերտել է հորը՝ Հովնաթանին։ Մկրտում Հովնաթանյանից քիչ թվով աշխատանքներ են հասել մեզ, որոնց շարքում առանձնանում են մի շարք դիմանկարներ ու սրբապատկերներ, ինչպիսիք են՝ «Հայոց frescoes of Saint Karapet Church in Aprakunis Region of Nakh-ichevan, of the building of Etchmiadzin's Ghazarapat hotel and the Residence of the Armenian Catholicos. Hakob Hovnatanian's son Hovnatan Hovnatanian was the court painter of the Georgian King Heraclius the Second since 1776. In 1778 the artist came to Etchmiadzin together with his disciples, restored and added more frescoes to his grandfather Naghash's works.

The representative of the fourth generation of Hovnatanian family Mkrtum Hovnatanian was born in 1779 in Tiflis, being a disciple of his father since early childhood. It should be noted that only few works of him have survived, among which stand out a number of portraits and icons of Armenian Kings series made for Etchmiadzin and the frescoes in the Armenian churches of St. Astvatsatsin (Holy Mother of God Church) and St. Gevorg in Tiflis. He also painted icons by order of Ossetia Synod, restored the frescoes of the St. Zion church in Tiflis. Among the artist's works the most known one is the portrait of his contemporary and friend Catholicos Ephrem the Second, which is preserved, along with two sketches, at the National Gallery of Armenia. Mkrtum had two sons–Hakob and Agha-



Հակոբ Հովնաթանյան.

Շուշանիկ Նադիրյանի դիմնանկարը

Hakob HovnatanianPortrait of Shushanik Nadiryan

1840-50

թագավորներ» պատկերաշարը էջմիածնի վեհարանում և որմևանկարները Թիֆլիսի հայկական Ս. Աստվածածին, Ս. Գևորգ եկեղեցիներում։ Ըստ որոշ աղբյուրների՝ նա սրբապատկերներ է նկարել նաև Օսեթիայի սինոդի www.dtnnd, husutu u dtnwywlalti t Ahsihuh U. Uhnli եկեղեցու որմևանկարները։ Մկրտումի ստեղծած դիմանկարներից հայտնի է նրա ժամանակակից և բարեկամ Եփրեմ Բկաթողիկոսի պատկերը, որը երկու tupիզների հետ պահվում t Հայաստանի ազգային պատկերասրահում։ Մկրտումի որդիներն են Հակոբ Հովնաթանյանը և Աղաթոնը։ Վերջինս ծնվել t 1816 թ. Թիֆլիսում, ավարտել t Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան, սովորել ռուս ճանաչված գեղանկարիչ, ակադեմիական ուղղության ներկայացուցիչ Կարյ Բրյուլովի արվեստանոցում։ Աղաթոնի տապանաբարը Թիֆլիսի Խոջիվանքի հայկական գերեզմանատուն-պանթեոնում է։ Հովնաթանյանների տոհմի վերջին խոշոր ներկայացուցիչը Հակոբն է (1806–1881 թթ.). նրան են համարում հայ արվեստում դիմանկարի ժանրի hիմնադիրը։ Նրա մասին տեղեկությունները ցավոք սուղ են։ շայտնի է, որ նա ծնվել է Թիֆլիսում, կրթությունն ստացել

ton Hovnatanians. The latter was born in 1816 in Tiflis, graduated from the Academy of Arts in Saint Petersburg, studied at the workshop of the Russian famous artist, representative of the academic direction Karl Bryullov. Aghaton's tombstone is in the Armenian Cemetery–Pantheon of Khojivank in Tiflis.

Hakob Hovnatanian was a representative of the last generation of the Hovnatanian painters, who is considered the pioneer of the portrait genre in Armenian art. The data on the artistic activity and biography of the master is, unfortunately, insufficient. It is known that he was born in 1806 in Tiflis, received education under the direct supervision of his father Mkrtum. From early childhood he studied and explored the characteristic features of the Armenian late medieval art, Persian miniatures of Safavids and Ghajar, which, along with trends of the European fine art, later diffused in his works, became the index of his artistic style. He spent most of his life in Tiflis, a few times visiting Yerevan, Etchmiadzin and Artsakh, and in late 1860s left for Tabriz, soon being invited to Tehran by the Persian King Naser al–Din Shah as a chief court painter.





Հակոբ Հովնաթանյան. Նատալյա Թումանյանի դիմանկարը Hakob Hovnatanian Portrait of Natalia Tumanyan

1830-40

Հակոբ Հովնաթանյան. Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարը

Hakob Hovnatanian The portrait of the Catholicos Nerses Ashtaraketsi

185



հոր՝ Մկրտումի անմիջական հսկողության ներքո։ Դեռ մանկության տարիներից յուրացրել t հայ ուշմիջնադարյան, ինչպես և Սեֆևյանների պարսկական մանրանկարչության, «ղաջարական արվեստի» առանձնահատերությունները։ Դրանք, եվրոպական գեղանկարչական միտումների հետ, հետագայում արտահայտվել են նրա ստեղծագործություններում՝ դառնալով նկարչի սեփական գեղարվեստական ոճի հիմքը։ Նա կյանքի մեծ մասն անցկացրել t Թիֆլիսում, մի քանի անգամեղել t երևանում, էջմիածնում և Արցախում, իսկ 1860-ականների վերջին մեկնել t Թավրիզ։ Շուտով Նասրեդդին շահը հրավիրել t արվեստագետին Թեհրան և դարձրել իր գլխավոր պատկերահանը։

The Shah repeatedly awarded him with medals. Hovnatanian passed away at the age of 75 and was buried at the yard of the St. Gevorg Armenian church in Tehran. According to biographers, the master was solely engaged in portrait painting; almost 70 of his works survived to our days, most of them kept at the National Gallery of Armenia and Fine Arts Museum of Georgia. The artist's sitters were hereditary nobles and their family members, wealthy merchants and rich craftsmen, as well as clergymen. In his small–shaped, chamber portraits the figures are depicted up to their knees or hips, shown three–quarters turned to the viewer. Hovnatanian's contemporaries appreciated his works, mainly due to portrait similarity, but the artist set a task to show the model's charac-

Շահը նրան բազմիցս պարգևատրել է շքանշաններով։ 2 ուվնաթանյանը կնքել է իր մահկանացուն 75 տարեկանում և հանգչում է Թեհրանի Ս. Գևորգ եկեղեցու բակում։ 2 ամաձայն կենսագիրների՝ 2 ուվնաթանյանը զբաղվել է բացառապես դիմանկարչությամբ։ Նրա աշխատանբևերից հայտնի է մոտ 70–ը. մեծ մասը պահվում է 2 այաստանի ազգային պատկերասրահում և Վրաստանի գեղարվեստի թանգարանում։ Նկարչի պատվիրատուները եղել են տոհմիկ ազնվականներ ու նրանց ընտանիքի անդամներ, մեծահարուստ վաճառականներ, ունևոր արհեստավորներ, հոգևոր դասի ներկայացուցիչներ։

ter, feelings, psychological description, which is clearly seen particularly in the 1850's famous portrait of Catholicos Nerses Ashtaraketsi.

Hakob Hovnatanian's cultural legacy is a vivid embodiment of the Armenian–Georgian and Armenian–Iranian cultural ties. In 1967 the Armenian outstanding filmmaker Sergei Parajanov directed a film Hakob Hovnatanian – a meditation on the art – dedicated to the Armenian master of portraits.



Նկարչի փոքր չափերի, կամերային դիմանկարներում ֆիգուրները պատկերված են մինչև ծնկները կամ գոտկատեղը՝ դեպի դիտողը երեք քառորդով շրջված։ Ժամանակակիցներն արժևորել են շովնաթանյանի աշխատանբները հիմնականում դիմանկարչական նմանության շնորհիվ, սակայն արվեստագետն իր առջև խնդիր է դրել նաև ցույց տալու բնորդի խառնվածքը, զգացմունքները, հոգեբանական նկարագիրը, ինչն էլ ցայտուն երևում է 1850-ականներին վրձնած Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հայտնի դիմանկարում։


շակոբ շովնաթանյանի թողած ժառանգությունը հայ–վրա– ցական և հայ–իրանական մշակութային առնչությունների վառ մարմնացումն է։ Հայ մեծանուն ռեժիսոր Սերգեյ Փա– րաջանովը 1960–ական թթ. նկարահանել է դիմանկարի հայ վարպետին նվիրված՝ «Հակոբ Հովնաթանյան» կինոնկարը։





Մկրտում Հովնաթանյան. Տիրամայրը և մանուկ Քրիստոսը

Mkrtum Hovnatanian Madonna and child Jesus



Mkrtum Hovnatanian Portrait of Abgar Nahabet









մերիկահայ նկարիչ Արման Թադեոս Մանուկյանը ծնվել t 1904 թ. մայիսի 15-ին Կոստանդնուպոյսում։ Հնտանիքում երեք ցավակներից ավագն էր։ Նախնական կրթությունն ստացել է Մխիթարյանների միաբաևությունում։ Դեռահաս տարիքում նա վերապրել t Հայոց մեծ եղեռնը։ Ի ծնե նրան անվանակոչել են Թադեոս՝ ի պատիվ շայաստանում քրիստոնեություն քարոզած երկու առաքյալներից մեկի։ Նրա հայրը՝ Արշակը, տպագրության ծաղկուն բիզնես ուներ։ Մանուկյան ընտանիքը մեկն էր եվրոպականացված այն հայ ընտանիքներից, որոնք իրենց բարձր կարգավիճակն ու հաստատուն դիրքն ունեին Կոստանդնուպոլսում։ Դեռևս մանուկ, Թադեոսը հիացած էր նավերով և սիրում էր նավահանգստից ժամերով հետևել դրանց։ Տղայի հորը հաջողվում է փրկվել ցեղասպանության առաջին ալիբից՝ թաբնվելով ընտանեկան տպագրատանը։ Հետո նա կարողանում է փախչել Ֆրանսիա, որտեղ սակայն 1917 թ., դժբախտաբար, մահանում է իսպանական գրիպից։ Թադեոսը կրտսեր եղբոր և քրոջ հետ մնում է մոր խնամքին՝ ապրելով մշտական վախի ու զրկանքների մեջ։


1920 թ. ապրիլին տղան ընտանիքի հետ տեխափոխվում է Նյու Յորք՝ մոր բարեկամների մոտ, այնուհետև Փրովիդենս՝ Ռոդ Այլենդ։ Նկարչական տաղանդի շնորհիվ նա արժաևանում է պետական կրթաթոշակի և ընդունվում Ռոդ Այլենդի նկարչական դպրոց։ Այստեղ նա մասնագիտանում է առևտրային պատկերազարդման ոլորտում և աշխատում որպես վիմանկարիչ։

Ավելի ուշ նա դասեր t առնում Նյու Յորքի Արվեստի ուսանողական լիգայում, ապա 1923 թ. ծառայության t անցնում ԱՄՆ ծովային հետևակի կորպուսում։ Այստեղ

rmenian-American painter Arman Tateos Manookian was born on May 15, 1904 in Constantinople. He was the oldest of three children in the family. He got his primary education in the Mekhitarist Congregation. As a teenager, he survived the Armenian Genocide. His given name was Tateos, which is the name of one the two apostles who brought Christianity to Armenia. He came from a family of Armenian Christians, and his father Arshag owned a successful printing business. The Manookian family was one of the Europeanized Armenian families that had held on to their status and affluence in Constantinople. As a boy, Tateos was fascinated by the ships, and used to watch them coming into port for hours. The boy's father, managed to hide himself in the family print shop so he succeeded in surviving from the Genocide. Although Manookian's father survived the first wave of terror in Constantinople, he fled to France where he died in 1917 after contracting the Spanish flu. Tateos, along with a younger brother and sister remained with their mother, enduring years of fear and hardship.

In April 1920, Tateos came to live with relatives of his mother in New York City and then in Providence, Rhode Island. Always gifted in art, he won a state scholarship to attend the Rhode Island School of Design. Here he specialized in commercial Illustration and worked as a lithographer.

Later he took classes at the Art Students League of New York before enlisting in the United States Marine Corps in 1923. While serving in the U. S. Marine Corps he was assigned as a clerk to the historian, Major Edwin North McClellan. In June of 1925, McClellan was assigned to Pearl Harbor, and Manookian



Ղեկավարների ողջույնը Greeting by Chiefs **1928**



2ավայացի տղա և աղջիկ Hawaiian Boy and Girl

նա մասնագիտությամբ պատմաբան մայոր Էդվին Նորթ Մակ Քլելանի համիարգն էր։ 1925 թ. հունիսին Մակ Քլելանին հանձնարարվում է մեկնել Փեռլ նավահանգիստ, Մանուկյանը հետևում է նրան։ Շուտով Մակ Քլելանը դառնում t «Խաղաղ օվկիանոսի դրախտ» ամսագրի խմբագիրը և խնդրում է Մանուկյանին նկարագարդել պարբերականը։ Արվեստագետն ստեղծում t պատմական մի պատկեր, որտեղ ներկայացված t հավայացիների առաջին հանդիպումը եվրոպացիների ու ամերիկացիների հետ։ Միաժամանակ նա գծանկարներ է անում «Լեդերնեք» ամսագրի համար: Այդ ընթանցքում ստեղծում t 75 գծանրկարներ, որոնք երբևէ չեն հրատարակվել ու այժմ գտնվում են շոնոլուլուի թանգարանում։ Նրա հետաքրքրության հիմնական առարկան ծովն tր ու ծովի մարդիկ։ 1927 թ. զինվորական ծառայությունը պատվով ավարտելուց հետո Մանուկյանը որոշում t մնալ և ստեղծագործել Հավայան կոցիներում։ Աստիճանաբար նա որմնանկարի ժանրում սկսում է զարգացնել ծովի թեման։ Հոնոլուլուում նա աշhumanıd t «Zalanınını aban artılmaha» i «human օվկիանոսի դրախտ» ամսագրերում։ Շուտով նա դառնում

followed him. Soon after, McClellan became editor of Paradise of the Pacific, and asked Manookian to provide illustrations. The artist created historical depictions of Hawaiians' first encounters with the Europeans and Americans.


While in the Marines, Manookian had supplied illustrations for Leatherneck Magazine and produced about 75 ink drawings for McClellan's History of the United States Marine Corps, which was never published. These drawings are now in the collection of the Honolulu Museum of Art. The main subject of his interest was the sea and people. In 1927, Manookian was honorably discharged from the Marine Corps, but decided to remain in Hawaii. Gradually he started to develop the marine theme in fresco. He worked for the Honolulu Star-Bulletin and for Paradise of the Pacific magazines. He also joined the newly formed Association of Honolulu Artists, and began to execute his first large oil paintings. Many of the artist's sketches from this period are at the Marine Historical Center in Washington DC. In Hawaii, Manookian bloomed as an artist. He loved to sketch the ramshackle homes that could still be found on the local beaches, and painted mythological and historical scenes

t Հոևոլուլուի նկարիչների նորաստեղծ ընկերակցության անդամ և սկսում t կատարել իր առաջին յուղաներկ աշխատանքները։ Նկարչի՝ այդ ժամանակահատվածում արված tuքիզների մեծ մասն այսօր պահվում t Վաշինգտոնի ծովային պատմական կենտրոնում։ Հավայան կղզիներում է Մանուկյանը ձևավորվում որպես արվեստագետ։ Նա սիրում էր ուրվագծել խարխուլ տները, որոնք դեռ կարելի էր գտնել լողափերին։ Արմանը սկսում է նկարել նաև դիցաբանանան և ապտմանան թեմաներով: 1928 թ. Մանուկյանի մի քանի նկարներ ցուցադրվում են տեղի հայտնի Գրին Միլ Գրիլ ռեստորանում, որտեղից էլ մեկ տարի անց Հեյեն Իրվին Ֆացան և նրա ընկեր Մյուրիել Դելմոնը մի քանի յուղաներկ աշխատանքներ են գնում։ Նկարների ևոր տերերը Հոևոլուլուի ամենաազդեցիկ կանանցից tին։ Դեյմոնը նկարչուհի tր և իր շրջապատի շնորհիվ Արմանի առջև մեծ հնարավորություններ են բացվում։ 1930 թ.աշնանը Արմանը կազմակերպում t իր առաջին և միակ կոմերցիոն ցուցահանդեսը։ Թեև Մանուկյանը մեծ հարգանք էր վայելում հավաքորդների շրջանում, բայց, այնուամենայնիվ, նրա խենթ վարքը երբեմն վնասում էր

with fervor. By 1928, a group of striking Manookian murals was hanging in the Green Mill Grill. It was there, in 1929, that Helene Irwin Fagan and her friend Muriel Damon saw and purchased several of Manookian oils. Arman's new patrons were two of the most influential women in Honolulu: Muriel Damon, herself a painter, she managed to open new opportunities for Arman due to her acquaintances. Arman held his first and only commercial exhibition in the fall of 1930. Despite Manookian's success with collectors, his erratic behavior damaged his reputation. His temper led him into heated discussions about art and culture, and he was often dissatisfied with his own work. At one exhibition, he flew into a rage and tore up several of his paintings. In 1931, Manookian was sharing a home with an architect who dabbled in photography. After shutting himself in his room for several days—some say because he was despondent, Manookian opened the door, and fell dead in front of a group of people. He was twenty-seven years old. In France, his mother, brother and sister were shocked at the news. Arman's last public work had been a four-foot-wide mural painted at the wall of Opera Theatre.





Որմևանկար Mural **1930**



հեղինակությանը։ Նրա նյարդային պահվածքը հանգեցնում t բուռն քննարկումների, և արդյունքում նա հաճախ tր դժգոհ է իր սեփական աշխատանքից. պատահել է անգամ ցուցահանդեսի ժամանակ մի քանի նկար է պատռել։ 1931 թ. Մանուկյանն ապրում էր մի ճարտարապետի հետ, որը տարված էր լուսանկարչությամբ։ Այն բանից հետո, երբ Արմանը մի քանի օր շարունակ փակվում է, ոմանք կարծում tին, որ նա ընկճախտ t ապրում. hարբած Մանուկյանը բացում t դուռը և անկենդան ընկնում հատակին՝ մի խումբ մարդկանց առջև: Նա մահանում է քսանյոթ տարեկանում: Նրա մայրը, եղբայրը և քույրը, որոնք Ֆրանսիայում tին բնակվում, ցնցվում են այդ լուրից։ Արմանի վերջին իանրային աշխատանքը չորս ոտնաչափ լայնությամբ որմնանկարն t օպերային թատրոնի պատին։ Արման Թադեոս Մանուկյանը Հավայան կղզիների ժամանակակից նկարիչներից ամենահայտնին t: Նրա աշխատանքները մեծ ճանաչում ունեն իրենց համարձակ և վառ գույների, ինչպես նաև Հավայան կղզիների բնակիչների ու նրանց կյանքի և պատմության պարզունակ պատկերման շնորհիվ։ Նրան համարում են մոդեռնիզմի ռահվիրաներից, թեպետ նկարիչը միշտ պնդել է, որ իր արվեստը բխում է արևմտյան դասական և Վերածննդի արժեքներից։ Արման Մանուկյանի գործերը պահվում են Բիշոպի և Հոնոյույուի արվեստի թանգարաններում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում։

շավայան կղզիներում Արմանը հայտնի է որպես «հավայան Վան Գոգ» անունով:





Տղամարդիկ կարմրավազանային նավակով լողում են դեպի ափ Men in an Outrigger Canoe Headed for Shore


1929

Arman Tateos Manookian is one of Hawaii's most celebrated modern artists. His works are famous for their bold, high–key coloring, and for his idealized portrayals of Hawaiian life and history. He is considered a pioneering Modernist even though the artist himself always insisted that his art was derived from Western Classical and Renaissance values. The Bishop Museum and the Honolulu Museum of Art are among the public collections holding works of Arman T. Manookian.

Here he is known as "Hawaii's Van Gogh".







Հավայական բնապատկեր Hawaiian Landscape





եղանկարիչ շովհաննես Ֆրանցիսկի Ռուստեմը ծնվել է Կոստանդնուպոլսում 1762 թ. սեպտեմբերի 29-ին։ Նկարիչ լինելուց բացի, նա նաև ուսուցիչ էր։ Նրա գործունեությունը սերտորեն առնչվել է Ռուսական կայսրության մեջ մտնող Լիտվայի, Բելառուսի և Լեհաստանի ստեղծագործական կյանքի հետ։

Նրա հայրը եղել է պոլսահայ, մայրը` ֆրանսուհի։ Ծնողները մահացել են, երբ տղան ընդամենը տասը տարեկան էր։ Ծնողազուրկ երեխային 1774թ. Լեհաստան է բերել իշխան Ադամ Կազիմեժ Չարտորիյսկին, որի հովանավորությամբ էլ տղան ստացել է նկարչական կրթությունը. Վարշավայում աշակերտել է Ժան Պիեռ Նորբելենին և Մարչելլո Բաչչարելլիին։

1788-90 թթ. Հովհաննես Ռուստեմը ուսումը շարունակել է Գերմանիայում, որտեղ անդամակցել է տեղական մասոնական օթյակին: 1798 թ. դասավանդել է Վիլնյուսի Գեղարվեստի գլխավոր դպրոցում, որն Ալեքսանդր Առաջին կայսրի հրամանագրով 1803թ. ապրիլի 4-ին վերանվանվել է Վիլնյուսի Կայսերական համալսարանն:

Ռուստեմին աշակերտել են Տարաս Շևչենկոն, Յուզեֆ Օլեժկևիչը, Կաունք Ռուսեցկին, Յան Դամելը և ուրիշներ։ 1807 թ. Ռուստեմն ընտրվել է Վիլնյուսի համալսարանի արտահաստիքային պրոֆեսոր՝ ղեկավարելով համալսարանի կերպարվեստի ամբիոնը, իսկ 1811 թ. հունիսի 9-ին հաստատվել է պրոֆեսորի կոչումը։ 1820 թ. նա Լիտվայում կազմակերպել է կերպարվեստի առաջին ցուցահանդեսը, որտեղներկայացրել է իր աշակերտների աշխատանքները։

Յան Ռուստեմի վաղ շրջանի աշխատանքներում ակնհայտ



he artist Jan Rustem (Hovhannes Rustam) was born on September 29, 1762, in Constantinople. Apart from being a painter, he was also a teacher whose activity is closely linked with the development of the creative life of Lithuania, Belarus and Poland which were then a part of the Russian Empire.

His father was an Armenian from Constantinople, his mother was French. His parents died at a very young age when the boy was only ten years old. The prince Adam Kazimierz Czartoryski helped the orphaned child to move to Poland in 1774. Under his patronage the boy got education in Warsaw, where among his tutors were Jean-Pierre Norblin de la Gourdaine and Marcello Bacciarelli.

In 1788–90 Rustem continued his studies in Germany, where he joined the local Masonic Lodge. From 1798 he gave classes at the Vilna Main School of Fine Arts which was renamed Vilna Imperial University in 1803. In 1820 he organized the first fine art exhibition in Lithuania, in which his students' works were presented. Among Rustem's students were Taras Shevchenko, Józef Oleszkiewicz, Kanuty Rusiecki, and many others. In 1807 Rustem was appointed professor at the Vilnius University, and in 1811, headed the Chair of Fine Arts until his retirement in 1826.


In the early works of Jan Rustem, the influence of French classicism is evident; later his creations acquire elements of romanticism. His works are kept in museums in Germany, Lithuania, Belarus and Poland. Among the portraits of early romanticism the works of Self-portrait and Grandmother

t ֆրանսիական կլասիցիզմի ազդեցությունը, իսկ ավելի ուշ, Նրա ստեղծագործությունները ձեռք են բերել ռոմանտիզմի տարրեր:

Նրա աշխատանքները պահվում են Գերմանիայի, Լիտվայի, Բելառուսի և Լեհաստանի թանգարաններում։ Վաղ ռոման—տիզմի ոգով դիմանկարներից հայտնի են «Ինքնանկար» և «Տատը թոռնիկի հետ» աշխատանքները։ Հայտնի են նաև գյուղացիների և քաղաքացիների կյանքից նրա գծանկարները, որոնք հիմնականում պահվում են Վիլնյուսի գեղարվեստի թանգարանում։ Նա մահացել է 1835 թ. հունիսի 21-ին Լիտվայի Դուկշտաս քաղաքում, որտեղ էլ թաղվել է։

with granddaughter are most recognized. A series of drawings that are mainly held at the Vilnius Fine Arts Museum depict the scenes of pastoral and city lives of people.

He died on June 2, 1835, in the city of Dukštas, Lithuania.



Քրիստինա Ֆրանկ Krystyna Frank 1819









hupuwuhum Self-portrait

Միչլ Ռոմերը Michał Römer **1820**



Պիժուս Տիշկևիչ Pijus Tyškievič







տալահայ նկարիչ Գրիգոր Շլդյանը ծնվել է 1900 թ. Նոր Նախիջևանում (այժմ՝ Դոնի Ռոստովի շրջանում), հաջողակ հայ իրավաբանի ընտանիքում։ Գրիգորը 15 տարեկանից աչքի է ընկնում գեղանկարչական ունա– կություններով։ 1915 թ. մեկնում է Սանկտ Պետերբուրգ՝ Գեղարվեստի ակադեմիայում ուսանելու։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տեղափոխվում է Թիֆլիս, որոշ ժամանակ անց՝ Ղրիմ։

1920 թ. մեկնում է Կոստանդնուպոլիս, ապա հաստատվում Վիեննայում, որտեղ և սովորում է Գեղարվեստի ակադեմիայում։ Երկու տարի անց մեկնում է Բեռլին, ամուսևանում ելենա Բոբերմանի հետ և նույն թվականին տեղափոխվում է Իտալիա՝ շռոմ, որտեղ և ապրում է մինչև 1927 թ.։ 1925 թ. մասնակցում է Հռոմի, իսկ 1926 թ. Կենետիկի փառատոն–ցուցահանդեսին։ Հինգ տարապում է Փարիզում, այնտեղ անդամակցում է «Անի» և «Հայ ազատ արվեստագետներ» միություններին։ 1933–41 թթ. ապրում և ստեղծագործում է Միլանում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կնոջ հետ բնակություն է հաստատում Գարդա լճի մերձակայբում և Միլան է վերադառնում միայն տարիներ անց։ 1947 թ. նկարիչներ Պիետրո Անիգոնիի և Անտոնիո Բուենոյի հետ հիմնում է «Ռեալիզմի արդի նկարիչներ» խումբը։

Շլդյանն ստեղծել է ժամանակակից և դիցաբանական թեմաներով կոմպոզիցիոն հորինվածքներ, դիմանկարներ ու նատյուրմորտներ։ Նշանավոր են «Թափառաշրջիկներ» (1942 թ.), «Պատմության մի էջ» (1942 թ.), «Երկու տարիք» (1957 թ.), «Մոդեռնիստների դպրոցը» (1958 թ.) և այլ գործեր։ 1958 թ. նկարիչն առաջին անգամ այցելում է Հայաստան. Էջմիածնի Մայր տաճարի համար ստեղծում է «Հայկական Աստվածամայրը» նկարը։

talian–Armenian painter Gregorio Sciltian was born in 1900 in Nor Nakhijevan (now Rostov–on–Don), in a family of a successful lawyer. He was a boy of 15 when his works stood out with artistic unique talent. In 1915 he moved to St. Petersburg to study at the Academy of Fine Arts. After the October Revolution he temporarily settled in Tiflis. After a short sojourn in Crimea, in 1920 he moved to Constantinople and then to Vienna, where he studied at the Academy of Fine Arts. Two years later he moved to Berlin and in 1923 he married Elena Boberman; in the same year he moved to Italy, settling in Rome where he lived until 1927. He participated in the Biennale of Rome in 1925 and the Biennale of Venice in 1926

He lived in Paris for five years, membering the Unions of "Ani" and "Armenian free artists." From 1933–41 he lived and worked in Milan. During the Second World War he settled near the Lake Garda together with his wife. Only years later he moved to Milan. He founded a group of "Modern Painters of Reality" with Italian artists Pietro Annigoni, Antonio Bueno, and others in 1947. Sciltian created compositions on modern and mythological themes, portraits and still lifes. Some of his famous works are Vagrants (1942), History Pages (1942), The two ages (1957), The School of Modernists (1958) and other works. His art is characterized by simplicity of shapes, chiaroscuro light distribution on bodies and objects, delicate emotional interpretation.

Sciltian is also known as a stage designer. He had designed Sergei Prokofiev's War and Peace, Carl Weber's Abu Hassan, Igor Stravinsky's Mavra and a number of other opera performances. Gregorio Sciltian water coloured 120 pages of

1968 թ. տպագրվում է Շլդյանի «Ֆիլատելիստը» նկարը Կուբայական փոստային նամականիշի վրա և անմիջապես դառնում է ֆիլատելիստական գրականության ուշադրութ– յան առարկա։

Նրա արվեստին բնորոշ են ձևերի պարզությունը, լուսաստվերի մեղմ բաշխումը մարմինների և առարկաների վրա, հոգեվիճակների նուրբ մեկնաբանումը:

Շլդյանը հայտնի t նաև որպես բեմանկարիչ, ձևավորել t Սերգեյ Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն», Կարլ Վեբերի «Աբու շասան», Իգոր Ստրավինսկու «Մավրա» և մի շարք այլ օպերաների բեմադրությունները, նկարազարդել Լև Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպը (120 պատկերազարդ թերթեր, ջրաներկ) և այլ գրքեր: Շլդյանի գործերում, որտեղ կարևորագույն գործոնը գույնն t,

Leo Tolstoy's novel Anna Karenina, and other books as well. In his works the content and form are in harmony, where the most important thing is color.

He first visited Armenia in 1958. He had been to Etchmiadzin Cathedral and created the canvas Armenian Madonna.

In 1968 Sciltian's most famous work The Philatelist was printed on the Cuban postal stamp and immediately became recognized in philatelic literature.

He had also written many theoretical works, among which stands out "Treatise on Painting", published in Italian, in Rome in 1976.

In 1981 his Food and Wine was reproduced on the postage stamp dedicated to the Italian World Food Day. A year later,



Բաքոսը պանդոկում Bacco at the tavern








բովանդակությունն ու ձևը ներդաշնակ են ողջ հորինվածքին։ Շլդյանը գրել է բազմաթիվ տեսական աշխատություններ, որոնցից առավել արժեքավոր է 1976 թ. Հռոմում իտալերեն հրատարակած «Գեղանկարչության տրակտատը»։ 1981 թ. Շլդյանի «Ուտելիք և գինի» նկարը վերարտադրվում է իտալական Համաշխարհային նպարեղենի օրվան նվիրված փոստային նամականիշի վրա։ Մեկ տարի անց Սան Մարինոն Շլդյանի նկարներով թողարկում է Սուրբ Ծննդյան երեք փոստային նամականիշ։ Շլդյանն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Հռոմում, Փարիզում, Մոսկվայում։ Նրա գործերից ցուցադրվել են Բրյուսելում, Լոնդոնում, Նու Յորքում և այլ քաղաքներում, աշխատանքները պահվում են Հռոմի, Վատիկանի, Վենետիկի, Միլանի, Ֆլորենցիայի, Փարիզի, Բրյուսելի թանգարաններում և Հայաստանի ազգային պատկերասրահում։

Շլդյանը մահացել է 1985 թ. Հռոմում։

the San Marino post published three postcard stamps with Sciltian's paintings.


Sciltian had individual exhibitions in Rome, Paris, Moscow, his works were exhibited in Brussels, London, New York and other cities. His works are held in museums of Rome, the Vatican, Venice, Milan, Florence, Paris, Brussels and the National Gallery of Armenia.

Sciltian died in 1985 in Rome.



Գողերի դպրոցը The school of thieves

1954-55



Ինքնադիմանկար Self-portrait **1954**






2ավերժական պատրանք Eternal Illusion **1968**







no Buc her agree of hours got go your rangers you to Makalon. How he cityen the gaze to a paramete a mesones. Co como hugues.



արգիս (Սերգել) Փարաջանյանցը (Փարաջանովը) ծնվել t 1924 թ. Թիֆլիսում հունվարի 9-ին, Հովսեփ Փարաջանյանցի և Սիրանույշ Բեժանովայի ընտանիքում, 3-րդ երեխան էր՝ քույրերից՝ Ռուզաննայից և Աննայից հետո։ Փարաջանովը նախնական կրթությունն ստանում է Թբիլիսիի N42 ռուսական միջնակարգ դպրոցում։ 19 տարեկանում ընդունվում է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի վոկալի բաժինը։ Վեց տարի անց Մոսկվայում ամուսնանում է Մոլդովայից թաթարուհի Նիգյար Սևարայի հետ։ Շուտով Մոսկվա են գալիս աղջկա եղբայրները, իմանալով, որ իրենց քույրն ամուսանցել է առանց հարացատներին տեղ լակ պահելու, Փարաջանովից պահանջում են մեծ փրկագին։ Սերգեյը հորն ուղարկված նամակում աղաչում t պարտքով տալ անհրաժեշտ գումարը։ Սակայն րևտանեկան ավանդույթը խախտած որդուց նեղացած հայրը մերժում է։ Նիգյարի բարեկամները պահանջում են, որ նա թողնի աղքատ ամուսնուն ու իրենց հետ վերադառնա հայրենիք։ Երիտասարդ կինը հակառակվում է, որի պատճառով զրկվում է կյանքից։

Փարաջանովը 1951–52 թթ. աշխատում է որպես ռեժիսորի ասիստենտ Իգոր Սավչենկոյի «Տարաս Շևչենկո» և Միշուրինի «Մաքսիմկա» ֆիլմերում։ Դրանից անմիջապես հետո, որպես դիպլոմային աշխատանք, նկարահանում է մոլդովական հեքիաթի թեմայով հատված «Անդրիեշ» կինոնկարից։ Նույն թվականին ավարտում է Համամիութենական կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտը, որից հետո նշանավվում է Կիևի գեղարվեստական ֆիլմերի ստուդիայում՝ որպես կինոբեմադրիչ։ Ապա Յակով Բազելյանի հետ համատեղ նկարահանում է «Անդրիեշ» գեղար կեստական ֆիլմը։ 1955 թ. ամուսնանում է Սկետյանա

argis Parajaniants was born on January 9, 1924, in Tbilisi (Georgian SSR) to Armenian parents losif Parajaniants and Siranush Bejanova, the youngest child after his elder sisters Ruzanna and Anna. The boy got his primary education in Tbilisi Russian school N 42. At the age of 19 he was enrolled to the Vocal Department of State Conservatory in Tbilisi. He matriculated at the Institute of Cinematography (VGIK) in the fall of 1945 and studied under the tutelage of the Ukranian director Igor Savchenko and Alexander Dovzhenko. His first marriage in 1950 was not a success. The woman was Nygar Kerimova from Moscow Tatar Muslim patriarchal family where interreligious marriages were tabooed. Parajanov turned to his father for a ransom to pay for his wife; however, having been insulted by this choice, the father rejected to support his son thus leading this marriage to an end.

In 1951–52 Parajanov assisted in directing Igor Savchenko's film Taras Shevchenko and Aleksey Mishurin's Maximka immediately after he had made his diploma work, producing a narrative film Andriesh based on the motives of a Moldovian fairy tale. The film Andriesh was later co-directed and brought to an end with Yakov Bazelyan in Kyiv Film Studio. In 1955 he married Svetlana Shcherbatyuk. Three years later, on November 10, his son Suren was born. This period was fruitful with a handful of documentaries such as Dumka, Natalia Uzhviy, Hands of Gold as well as, a number of pastoral sequences The Top Guy, The Ukrainian Rhapsody, The Flower on a Stone, and a British-awarded narrative film The Shadows of Our Forgotten Ancestors.

Kyiv Frescoes (1965–1966) was the aborted project that Parajanov planned as his follow–up to Shadows of Forgotten Ancestors (1964). Although Parajanov never received approval

Շչերբատյուկի հետ։ Երեք տարի անց՝ նոյեմբերի 10-ին ծնվում է որդին՝ Սուրենը։ 1961թ. ամուսնալուծվում է։ Այդ ընթացքում նկարահանում է «Դումկա», «Նատալիա Ուժվի», «Ոսկե ձեռքեր» կարճամետրաժ և «Առաջին տղան», «Ուկրաինական ռապսոդիա», «Ծաղիկը քարի վրա», «Մոռացված նախնիների ստվերները» գեղարվեստական կինոնկարները։

1965 թ. հունիսի 1-ին իր սցենարով սկսում t «Կիևյան որմնանկարներ» կինոնկարի աշխատանքները։ Նոյեմբերի 1-ին կինոնկարը փակվում t. նկարահանումներից պահպանվել է կինոփորձերի 20 րոպեանոց հատվածը։ Մեկ տարի ակց ապրիլի 12-ին Փարաջանովը գործուղվում t «Հայֆիլմ»։ Սկսում t «Սայաթ Նովա», «Նռան գույնդ» կինոնկարի աշխատանքները, գրում t «Խոստովանանք» ինքնակենսագրական կինոնկարի սցենարի առաջին տարբերակը, նկարահանում «Հակոբ Հովնաթանյան» ութ րոպեանոց ֆիլմը։ 1969 թ. էկրան է բարձրանում «Սայաթ Նովա», «Նռան գույնը» կինոնկարը։ Սցենարները հաջորդում են մենո մյուսին։ 1971 թ. դենտեմբերի 1–ին Մինսնում ելույթ t ունենում Բելառուսի երիտասարդ ստեղծագործողների և գիտնականների հավաքի մասնակիցների առջև և ցուցադրում «Նռան գույնը»։ Կինոնկարը և ելույթի սղագրությունը ՊԱԿ-ի նախագահ Յու. Անդրոպովը ուղարկում t ՍՄԿԿ ԿԿ, որն էլ դառնում է բանտարկության իրական պատճառ։ 1973 թ. Վ. Շկլովսկու հետ համատեղ գրում t Անդերսենի մասին «Հրաշք Օդենսում» կինոնկարի սցենարը, որը պատրաստվում է նկարահանել Երևանում։ Հենց այդ ժամանակ էլ ծանոթանում է Լիլյա Բրիկի հետ։ Բանտարկվում է Կիևում 1973 թ. դեկտեմբերի 17-ին, որտեղ մեկնել էր ծանր հիվանդ որդուն տեսնելու, այնտեղից էլ տեղափոխվում է Լուկյանովսկի բանտ: Բանտարկությանը to begin shooting due to conflicts with the authorities, he did manage to complete various drafts of the script and the initial screen tests, which he edited into a self-contained 20-minute short with a soundtrack. In 1969 Parajanov left for Armenia to shoot the film Akop Ovnatanyan, later he embarked on Sayat Nova film, one of his crowning achievements; re-edited and renamed The Color of Pomegranates for censorship reasons. Then he wrote the first version of his autobiographical film Confession.

In 1971 he made a speech before young professionals in Minsk (Belarus), where the Sayat–Nova film was presented. The record of the film as well as the speech was handed to the Chairman of the KGB Y.Andropov, the CC of CPSS, which caused the ensuing arrest.

In 1973 together with V. Shklovskiv he wrote the script of The Miracle in Odense dedicated to the life and works of Hans-Christian Andersen and meant to be shot in Yerevan. However, in December of 1973 the Soviet government arrested P arajanov and sentenced him to five years of hard labor work. With the efforts of eclectic figures, filmmakers of the time as well as the intervention of the French Surrealist poet Louis Aragon, on December 30, 1977, Parajanov was prematurely released from the camp but he was deprived of the right to live in Kviv, Moscow, Leningrad, so he returned to Tbilisi. A year later he wrote a letter to Armenian authorities with a request to give a permission to shoot Ara the Beautiful and David of Sassoon. It was then Sergei Parajanov started to create collages, saying that the 'collage" is a condensed film.' In February 1982 Parajanov was once again imprisoned, on charges of bribery, which happened to coincide with his return to Moscow for the premiere of a play commemorating Vladimir Vysotsky at the Taganka Theatre, and was affected with some




Տատիկի ընկույզի մուրաբան Grandma's nut jam





Վարիացիա Պինտուրիկիո և Ռաֆայել թեմաներով Variation on the themes of Pinturicchio and Rafael **1989**

2որս տարօրինակ և ծիծաղելի կյանքը My father's strange and funny life









հաջորդում t ԽՍՀՄ կինոմատոգրաֆիստների միությունից վտարումը։ Մեկ տարի անց ապրիլին դատարանը որոշում t ազատազրկել Փարաջանովին 5 տարվա ժամկետով։ Նա պատիժը կրում t խիստ ռեժիմի պայմաններում։ Այդ ժամանակ սկսվում t «Ազատություն Փարաջանովին» նշանաբանով մշակույթի համաշխարհային գործիչների բողոքի ակցիան։ 1977 թ. դեկտեմբերի 30-ին, ժամկետից մեկ տարի շուտ, Փարաջանովն ազատվում t ճամբարից՝ շնորհիվ Լուի Արագոնի միջամտության, Լիլյա Բրիկի միջնորդության։ Չրկվելով Կիևում, Մոկվայում, Լենինգրադում, Երևանում ապրելու իրավունիքից՝ վերադառնում t Թբիլիսի։ Մեկ տարի անց նամակով դիմում t Հայաստանի իշխանություններին՝ «Արա գեղեցիկ» կամ «Սասունցի Դավիթ» կինոնկարներ նկարահանելու թույլտվություն ստանալու խնդրանքով։ Հենց այդ ժամանակ էլ Սերգեյ Փարաջանովն սկսում t կոլաժներ ստեղծել, ասելով, որ «կոյաժը դա խտացված ֆիլմն է»։ Սակայն նա երկար չի մևում ազատության մեջ։ 1982 թ. փետրվարի 11-ին ձերբակալվում t Թբիլիսիում՝ քրոշ որդուն բարձրագույն դպրոց ընդունվելու համար կաշառք տալու մեղադրանքով։ Հոկտեմբերի 5-ին ազատվում t դատարանի դահլիճից՝ Վրաստանի և Ռուսաստանի մշակույթի գործիչներ՝ Ս. ճիաուրելիի, Բ. Ախմադուլինայի և ուրիշների ակտիվ պայքարի շնորհիվ։ Հաջորդող տարիներին աշխատում t «Վրացֆիլմ» կինոստուդիայում. նկարահանում t «Լեգենդ Սուրամի բերդի մասին» (1984) թ., «Աշուղ Ղարիբ» (1988 թ.) կինոնկարները։ 1985 թ. հունվարի 15-ին Թբիլիսիի Կինոյի տանը բացվում է նրա աշխատանքների ցուցահանդեսը։ Սցենարներ գրելուց բացի, այդ ժամանակահատվածում նա մի շարք ֆիլմերի համար tuբիզներ t անում։ 1988 թ. հունվարի 15-ին Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանում՝ «Դիմակահանդես կինոբեմադրիչի արվեստանոցում» խորագրով ցուցահանդես t բացում։ Փետրվարին առաջին անգամ մեկնում t արտասահման՝ մասնակցելու Ռոտերդամի կինոփառատոնին, հետագայում մասնակցում է Մյունխենի, Վենետիկի, Նյու Յորքի կինոփառատոներին։ Նույն թվականի ապրիլին որոշվում t Երևանում Ս. Փարաջանովի տուն և թանգարան իիմևադրելու մասին։

ես վաճառեցի ամառանոցս I sold my gazebo

1989 թ. դեկտեմբերից մինչև 1990 թ. հուլիսը Հայաստանի ժողվոդական արվեստի պետական թանգարանում կազմակերպվում է 1988–89 թթ. ստեղծված նոր աշխատանքների ցուցահանդեսը։ 1990 թ. փետրվարի 27–ին Ս. Փարաջանովին շնորհվում է Ուկրաինական ԽՍՀ, իսկ հունիսին Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում։ Մարտի 15–ին առողջական վիճակի վատթարացման պատճառով տեղափոխվում է Երևան, սակայն բուժումը շարունակում է Փարիզում։ Մահացել է 1990 թ հուլիս 20–ին կեսգիշերին՝ Երևանի հանրապետական հիվանդանոցում, թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում։

1997թ. հունիսին Կինի Ա. Դովժենկոյի անվան կինոստուդիայի տարածքում, 2004 թ. նոյեմբերի 6-ին Թբիլիսիում կանգնեցվել են Ս. Փարաջանովի հուշարձանները։



Պատերազմի արձագանք A war response 1988 degree of trickery. Despite another stiff sentence, on October 5 he was freed in less than a year due to the protest activity of Georgian and Russian cultural figures (S. Chiaureli B. Akhmadulian and others). Later he shot The Legend of the Suram's Fortress at the Gruzia film studio. On January 15, 1985 in the Cinema House of Tbilisi Parajanov's exhibition was launched. In this period, in addition to script writing, he made a series of sketches for number of the films. On January 15, 1988, an exhibition Masquerade at the film director's studio was launched in National Museum of Folk Art of Armenia. His first overseas visit was the Rotterdam Film festival. Later he took part in Film festivals in Munich, Venice and New York. On February 27, 1990 Parajanov was awarded the title of People's Artist of the Ukrainian SSR, later the People's Artist of the Armenian SSR. On March 15, Parajanov moved to Armenia because of poor health. He passed away in July 20 of 1990 at midnight, in the Republican Hospital. It survives in its original negative in Parajanov: The Last Spring (1992) shot by his closest friend Mikhail Vartanov. He is buried in Komitas Pantheon. In 1997 at the Kyiv film studio after Al. Dovzhenko a memorial to S. Parajanov was opened. In 2004 a monument was erected



2ռոմոլուսը և 2ռեմոսը Romulus and Remus



Աղոթք Հովնաթանյանի համար Prayer for Hovnatanyan



Lացող Չոկոնդա Joconda weeping 1977



Մի քանի դրվագ Ձոկոնդայի կյանքից Episodes from Joconda's life





Գրքի ստեղծմանն աջակցելու համար «Համահայկական աշխարհագրական ասոցիացիան» շնորհակալություն է հայտնում`

Տատյանա Գայդուկին Լյուսի Մայքլին Ստեփան Ներսիսյանին Էննի Ռոբսոնին Սուրեն Չուրաբյանին Աննա Մնացականյանին Մերի Կիրակոսյանին Չոն Վիլյամսին Էդվարդ Թեյլորին Չավեն Սարգսյանին Լազլո Բաանին Գեորգի Սզուչին Մարինե Հարությունյանին Դավիթ Իսաջանյանին Մայդա Սարիսին Սմբատ Արսենյանին Չոհրապ Մինասին Սևան Նագգաշյանին Գուրգեն Միսաքյանին Յուրի Մեջիթովին

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը

For support in preparing the book the "Panarmenian Geographic Association" extends its gratitude to:

Tatyana Gayduk Lyusi Michael Stepan Nersisyan **Enny Robson** Suren Zurabyan Anna Mnatsakanyan Meri Kirakosyan John Williams Edward Taylor Zaven Sargsyan László Baán György Szücs Marine Harutyunyan Davit Isajanyan Mayda Saris Smbat Arsenyan Zohrap Minas Sevan Naccashian Gurgen Misakyan Yuri Mejitov

Ministry of Diaspora of the Republic of Armenia Ministrry of Foreign Affairs of the Republic of Armenia

